

ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻԻ 8

1 Օգոստոս 1899



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐԱՆ.

ՃԻՎԷԼԷԿԵԱՆ

Պապը Ալի Հատտէսը Թիւ 20

1899

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

— — —

- 1 Արձակուրդիս օրերն լսարանի մը մեջ .
- 2 Դերականական փորձ մը .
- 3 Անարատ Յղութիւն Ամենասուրբ Կուսին .
- 4 Բնութիւն . (Natura) .
- 5 ՎԱՐԲ Ս. ՄՈՆԻԲԱՅԻ. ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ԱՐԻԿԵԱՆ

Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Ե Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Տասներորդ Տարի

ԹԻԻ 8

1 Օգոստոս 1899

ԱՐՁԱԿՈՒՐԴԻՍ ՕՐԵՐՆ

ԼՍԱՐԱՆԻ ՄԸ ՄԷՁ



(Ըստ հին ժրխաց)

Ա.Ս. Պատուկի
Հ. Վարդան Հացուրի

Ալպեա՛նք, Ալպեա՛նք երազեցի այս տարի ուսումնական
երկար շրջանիս ժամանակ:

Քննութիւններս հազիւ աւարտած էի՝ պատրաստեցի արկ-
ղիկս, Մնացեք բարեաւն աճապարեցի բսել որոնց որ պատշաճ
էր: Պայուսակիս մէջ գետեղեցի քանի մը դրեան՝ ընծայելու
համար դիտնական անձանցի կամ անկամատ գրչի մը. 1. Այն
մի գիրքն որ նրատարակած եմ, 2. երկրաբանական՝ Անճա-
նօրի խնդիրն, 3. աստղաբաշխական՝ երկինք պատմեն զվառու
Աստուծոյ, 4. Ս. Բարսեղի Վեցօրեից ակնարկն, 5. Առողջա-
բանութիւն քաղաք. եւ սուտնին, 6. Ալպեանց նկարա-
գիրն, 7. Ս. Իգնատիոսի ակնարկն, 8. Ընտանեկան
աստղաբաշխութիւն, եւն. եւ ինչ որ գեռ ձեռագիր է
քովս Իսկ զրպանս զրի, ա՛խ չմոռնամ յիշելու, փոքրածաւալ,
փոքրիմաստ՝ 53 էջերէ կապուած զրքուկիկն, 1898 (ՌՅԽԷ)
ին Ալպեանց ըստ բաւականին մօտ տեղ մը հրատարակուած.
ոչ ինծմէ:

Նպատակն էր դէպ Ալպեանքը դիմել, անցունել արձա-
կուրդիս օրերն բնութեան ծոցին մէջ, լսիկ, միայնակ հեռու
ըսի՛սաւներէ, հեռու ազքատ—հպարտ ճամբարակներէ, հեռու
ինքնագով խղճովի տիրացուներէ, արեղցիկեղ անյարիր խօսող-
ներէ, որոնք նողականք կ'ազդեն լսիկքին, վերջապէս հեռու
այնպիսիներէ որոնք ամեն պնակի մէջ քթկոնին կը մխն
կատուի մը պէս, եւ երբ ազդարար գաւաղանիկն տեսնեն՝
կ'ըսկսին մալալ, վրդովիլ, եւ ջանալ խածատել:

Զարմանալի խաղեր ունի բնութիւնն. մինչ տակաւին
մեկնած չէի՝ մարդկային ընկերութեան այս աժդոյն կերպա-
րանները կը պատկերանային մաքիս առջեւ. մինչ քիչ յետոյ
Ալպեան մեծանիստ բարձունքէն Կադորեան սարերէն (Alpes
Cadoriques) Բարիզի երկայնութեան 100 ին վրայէն շեշտակի
դէպ հարաւ երբ կը նայէի՝ նոյն այդ ախուր պատկերն կը
կերպարանէր աչքիս առջեւ:

Պարտականութիւն մ'ալ ունէի կատարելիք. հրաւէր ըս-
տացած էի քաղաքիս մեծահամբաւ Լսարանի մը մէջ արուե-
լիք քրիստոնէական հնախօսական պայքարի մը ներկայ դա-
նուելու: Թէպէտ եւ ականայ՝ վասն զի գէթ օր մը պիտի ու-
շանայի իմ ցանկալի նպատակէս՝ բայց վասն զի խղճի պարտք
էր քաջալերել զիսութիւնն, սգնել աղարկն, ուղղել ինքնա-
հաւան սխալօղն, ձեռք տալ ալջծուփ աատոնողին, ուստի
թէպէտ եւ ականայ՝ այլ վերջին ճիգ մ'ալ կամքիս գէտ թափե-
լով մտայ Լսարանէն ներս:

Բաղմականք զրաւած էին իրենց աթոռներն ընդարձակ
եւ հովատուն սրահին մէջ:

Ծանօթ մ'որուն ո՛վ ըլլալն կը թողում գուշակել Պատ.
Ընթերցողներուս, կամ թէ արդէն խոյ գուշակեցին, կանչուե-
ցաւ խօսելու: Պաշտպանուելիք եւ լուծուելիք Առաջարկներն
էին՝

Ա. Յարութեան յետոյ Փրկչին յայտնուած օրերն որո-
շել եւ ցոյց տալ՝ թէ Առաքեալներն ինչո՞ւ համար ի ժողովի
են այն օրերուն:

Բ. Ի՞նչպէս կրնայ մեկնուիլ Ս. Իգնատիոսի Զմիւռնիաց-
եաց բոքոյն Գ. Ա. 3 հատուածն:

Առաջին Առաջարկը՝ հետեւանքէն եղբակացունելով պաշտպանեց Պաշտպանօղն՝ թէ կիրակի օրերուն հարկ է ընծայել. եւ Փրկչին կանխիկ հրամանին արդիւնք համարելով զայն՝ այդ ժողովներու մէջ Փրկչին ներկայութիւնն եւ Ս. Հացի բեկումն փաստարանեց. եւ

Երկրորդ առաջարկն ի նպաստ վերինն բացատրեց՝

Սակայն խորուսն սկսաւ ձախակողմի տթոռներէն մէկէն, խորխորհուրդ պատուելի մը՝ (որու համար կ'ըսեն՝ թէ առատ նկանակ եւ հաց ունի, իսկ դիտական եւ կրթական խնշերանք)՝ Գլխորեայ կենցաղ քրիստոնէից գիրքը օրտին՝ անհաւան այդ փաստերուն՝ բողոքեց ձեռնամբարձ. Ներուի ինձ եթէ չը կարենամ իր խօսքերն մի առ մի յուշարկել. վասն զի թէ ինքն եւ թէ իր խօսքերը նոյնչափ չփոխած երեւցան ինձի. Փաբիոլայի կալպուսնիսը կարծեցի լսել. Համառօտ ըսել, հիմն ի վեր ջանաց ընել պաշտպանողականն, փաստարանեց բան մը բայց թէ ինչ էր չեմ գիտեր, ինքն ալ չէր գիտեր կարծեմ:

Երբ կասեցաւ բողոքարկուն իր աջուձախ ձախորդ չահատակութիւններէն՝ Դիւանադպիրն նկատելով թէ նա հայերէն չգիտեր, (վասն զի արտասանած բառերուն զօրութիւնը չհասկընար.) առաջարկեց վաւերագիրերը (documents) հեղինակներուն լեզուովը կարդալ, որպէս զի ի հարկին դիմէ ուրիշին եւ զաղափար մը գէթ կարենայ կաղմել. ժողովն ընդունելով այդ առաջարկն՝ սկսաւ ընթերցումը բարձր ձայնով:

Ի սկզբան համառօտ անգեկութիւն մը սուսաւ վաւերագրին հեղինակին անձին եւ գիտութեան վրայ. Վաւերագիրերը Յիսուսեան ընկերութենէն P. Ignazio M. Minasiինն էին. հեղինակէս, երբայակէս, եւ սքանչելի հնասօս. Գրքին անունն էր «La dottrina del Signore pei XII Apostoli» եւն. Roma, 1891, քառածալ, 438 էջ. Սկսաւ ընթերցումը. էջ 144.

Ս. Վաւերագիր. — Giovanni XX, 26, narrando l'apparizione del Redentore, nella quale fu guarita l'incredulità di S. Tommaso, determina il tempo in cui avvenne, cioè dopo otto giorni, computando i due estremi, il giorno della risurrezione e della prima apparizione ai discepoli insieme adunati.... Del resto l'istesso Evangelista dicendo come dopo otto giorni, «palin isan esò i mathitae autou,» par che accenni colla voce, «palin», e con l'altra, «esò», l'istesso luogo e l'istessa adunanza ripetuta, come prima, nel giorno della Risurrezione....

Բողոքարկուն ընդմիջելով, «Բայց այդ ժողովն առ, անին հրեից էր. գամ ըային հետ կապուած է այդ. Յիսուս զոց զոնէն պէտք էր որ անցնէր յարուցեալ մարմնոյն նորոթիւնը ցուցնելու համար» (Բազմավէպ 212, 265, հւն) :

Դիւանադպիրն ընդհատեց խօսքն եւ ըստւ. Դուք Պատուելի, Առաքեալներուն Ս. հացը կը զլանաք տալ իրենց անհաւատութեան համար, (Բազմ. 210), եւ զգալի վատտեր (անդ 210) հարկաւոր էին կ'ըսէք: Ս. Հացի բեկումէն աւելի՞ զգալի վատտ է միթէ յարուցեալ մարմնոյն նորոթիւնը կամ հոգեկանութիւնը ցոյց տալ: Յիսուսի չէին հաւատար կ'ըսէք, մինչդեռ կը ջանաք Յիսուսի հոգեկանութիւնը ցոյց տալ անոնց... Ի՞նչ կ'ուզէք արդեօք ըսել:

Ընդհանուր ծիծաղ մ'էր եւ քրքիջ ամեն կողմէ. բայց ի Պատուելիէն, կ'ենթադրուի:

Un'altra apparizione è notata in S. Gio. XXI. 1, in questi termini: Postea manifesta vit, se iterum Iesus discipulis ad mare Tiberiadis. Trattandosi in quel che segue di una nuova apparizione, più acconcio sarebbe esporre la nota del tempo, «meta tauta», come dinotante l'intervallo tra la precedente apparizione e la seguente, che comincia a narrare; e la voce «palin» nella frase che segue, fecit seipsum rursus manifestum, essendo prima invisibile agli occhi dei suoi, conferma la suddetta esposizione.

Բողոքարկուն փորձեց ընդմիջել, «Ո՛հ, օրն անյայտ է հոն, կիրակի ի՞նչպէս կը դնէք. ի՞նչպէս հացի տրուիլը Ս. Հացի բեկումը կը համարիք. Չհարկաւոր է կիրակին կը սրբութի՞ւն, մովսէսական այն խիստ շաբաթուն փոխանակող կիրակին: Ի՞նչպէս կարելի է աւագին վրայ Ս. հացը բեկանել: (Բազմավէպ 265):

Պաշտօնեան լուսաւորեց զՊատուելին բացատրելով թէ զիրին էր հասկնալ թէ մովսէսական շաբաթին պաշտօնապէս փոխանակուած չէր տակաւին կիրակիով. առ այդ՝ ի շաբաթուն հանդարտեցին վասն պատուիրանին, Յիսուսի կիրտկնորիայ այս երեւումներովն է որ պաշտօնապէս կը փոխանակուի կիրակին շաբաթին տեղ: Աւագի վրայ, ծովուն եզերքը, անձաւ մը մէջ, յանապատի, դաշտի վրայ, Ս. հացը կը բեկանէին

նախկին քրիստոնեայք. վկայ՝ Ab. Vincenzo d'Avino et P. Ant. Pellicani. Enciclopedia, Torino, 1878. Messa, c. II. էջ 209 ևւն. ևւն. Ինչո՞ւ օրէնսդրին այս իրաւանց վրայ կը ծիծաղէր: Ընդհանուր ծիծաղ:

Պատուելի հատուածաբերն կը գոչէ. «Անուշադիր դոնուեցաւ. Պատկեր երկուքի զատելով միակ երեւումը. չորրորդ և հինգերորդ կոչելով նոյն երեւումն, և անոնց ասաջինը դարձեալ կիրակի զնկով» (Բազմ. 208, 267): Պաշտօնեայն չպատահանեց. լուսթիւն ևւ ուշադրութիւն հրամայեց:

In effetto, dopo aver compita la sua narrazione, l'Evangeliista vi appone questa nota: Hoc iam tertio manifestatus est Iesus discipulis suis cum resurrexisset a mortuis. (14). Adunque la voce, «palin», precedente, significa che il Redentore per la terza volta, triton, si fece manifesto ai suoi discepoli insieme adunati, dopo essere per la seconda volta loro apparso. La quarta. (ուշադրութիւն. Apparizione è notata da S. Matteo. XXVIII, 16 . . . cioè apparve in Galilea, sopra una montagna, là, dove Gesù avea loro prescritto di adunarsi. La quinta, accaduta sulla montagna degli Olivi, è narrata negli Atti Apostolici. I, 6-12, e brevemente ricordato nell' Evangelo XXIV, 50 sgg. da S. Luca.

Dal testo degli Atti ed anche dell' Evangelo è determinato il luogo, nel quale questa quinta apparizione avvenne, ma non leggiamo notato l'intervallo di tempo tra la quarta e la quinta, e nè pure tra la terza e la quarta apparizione. Տեսա՞ք, Ի՞նչպէս իրաւունք կու տային ծի. գոչեց պատահին: Nullameno la seconda essendo accaduta dopo otto giorni d'intervallo dalla prima, è probabilmente dopo l'istesso intervallo ancor la terza, avvenuta come le due precedenti alla presenza degli Apostoli insieme congregati, pare che l'istesso debba dirsi della quarta, apparendo a tutti i suoi insieme raccolti. Adunque, nei quaranta giorni che Gesù resuscitato stette tra i suoi, si nota negli Evangelii, che cinque volte apparve

ai discepoli insieme adunati, escluse da questo numero da S. Giovanni colla voce, «tertio,» le apparizioni fatte ai particolari ed alle sante donne. E par che le prime quattro sieno accadute nel primo giorno della settimana giudaica, Una sabbatorum, cioè la Domenica dei Cristiani, il giorno della letizia, nei luoghi qui sopra indicati.

«Է՛, բոլոր կիրակի եղաւ», կը մուտար Պատուելին:

Nella quinta, avvenuta in un giovedì, il Signore, pigliando commiato dai suoi, confermava (սչ թէ stabili-va) il mistero dell' Eucaristia

«Շատ լաւ, կը կրկնէ Պատուելին. բայց Ս. հացի բեկումն անհնարին էր այդ օրերուն, զի կանխեալ հաւատար հարկաւոր էր ատոր մինչդեռ, անհատատ էին առաքեալները. որով այդ Ս. հացն ստկական հացէ առելի փաստ պիտի չընծայէր անոց, Տեսք (չէ. էշ. 41) եւ մինչդեռ, սակաւին չընաւատային՝ կերակուր կը խնդրէ եւ կ'ուտէ»: (Բազմ. 210).

Դիւանադպիրն տախուկեցաւ զիրքը վար զնկէ եւ հարկ եղած տարրական գիտելիքն հաղորդել Մեծ. պատուելիին:

— *Առաքեալներուն (ըսէ մարդկային) մաքին անհատատութիւնը գիտնալով Փրկիչն՝ Այս նոր ուխտ ձեզ բռնելով Ս. Հացին լեկուսմն իր սիրոյն Դաշինք կը զնէ վերջին Ընթերցին առնել. Յարութեան առաջին օրն այդ անհատատութեան մէջ են անոնք. կը լսեն յարութեան լուրը, կ'անհաւատին, շաղկապվութիւն կը համարին. սակայն երբ կը չօգտինն ձեռքերն եւ ոտքերն՝ կամ անոնց անունը կը հնչեցունէ՝ կատկած չունին այլ եւս, սքանչացման տեսիլը կը տիրէ. ասոր ջնաստալ ի խնդրութենէն կ'ըսենք, ի խնդրութենէն սակայն, վերջին բառը լընկնիլդ գտաւարարակի է: Այս միջոցին կը փարին Անոր ոտքերուն, Տէր իմ եւ Աստուած իմ խոստովանելով: Այս սիրազեղ յաւրման մէջ՝ իր նոր Ուխտը իր սիրոյն Դաշինքը արժանաւոր եւ լոնական կերպով կը ներկայացունէ: Շնորհաց կարգն ալ բնական կապն ալ այսպէս են:*

Բ. վաւերացիր.— Qualche altra adunanza del Signore e degli apostoli uniti insieme vi sarà stata, la quale non è notata nel nuovo Testamento. Il principe degli apostoli potea dire, synephághomen kai synepiomen autò, solo delle adunanze fatte in commune, se la frase

deve almeno verificarsi d'una, non vediamo perchè non possa estendersi a tutte. P. Ign. Minasi, էջ 147.

Accostavasi, adunque, il Signore ai suoi discepoli congregati, e tra loro come nell' ultima Cena, trattava delle cose spettanti alla sua Chiesa, queste furono, compresa l'ultima Cena, le prime Sinassi cristiane. Non noteremo qui le cose che Gesù disse, a pena accennate negli Evangelii e negli Atti..., ma solo osserveremo quel che poi fecero gli Apostoli (Վասն զի անոնց ըրածը՝ Փրկչին հրամանն է). Negli Atti Apostolici xx, 7, leggiamo, una autem sabbati postquam convenissent discipuli ad fragendum panem La frase, una sabbatorum, per indicare il giorno della Sinassi dei Cristiani, si legge ancora I. Cor. XVI, 2, ed altrove

Գ. Վառերազիր. — P. Minasi, L. C. P. 150. — Nell' Apologia diretta ad Antonino Pio (67), dopo aver detto due volte che il giorno, in cui i Cristiani si adunavano, era il giorno del sole, dà ragione della scelta, dicendo, come in esso Dio creò il mondo, e nello stesso giorno Gesù, risorgendo, lo rinnovò ed in esso apparve ai suoi discepoli, ed aparendo li ammaestrò in quel che appartiene all' Eucaristia, conforme è descritto nei 65-67. Ուշ զըրեւ. Nè sarà arduo dalla parte nostra l'affermare, che le parole del S. Martire inchiudono la determinazione del giorno suddetto, fatta da Gesù stesso risuscitato, e l'istesso fatto, l'apparire cioè otto giorni dopo, lo determina. Ma quel che S. Giustino non disse apertamente lo lasciò scritto S. Clemente romano I. Cor., XL.

Պատուելին այլ յայմէ կարատեց խօսքն եւ գոչեց. «Ըստ ինձ ծանօթ հնախօսութեան, Հռովմայ ստորերկրեայց մեզ նկարեալ ձուկն եւ հաց ի նշանակ հաղորդութեան՝ ընն առեալք Տիբերեայ անցքին... Բնական իւրին ու շէրէր երբայ ծովակին ջրէրէն հարաւ Ս. Խորհրդոյն օրինակն (Բազմ, 265-266).

Շատ անխորհուրդ էր խօսիք եւ շատ անճան. պատասխանեց Դիւանապետը. եթէ Ս. Խորհուրդին նիւթը զաշտերէն էր քաղենք, (մաքալ??), ինչո՞ւ Անոր օրինակը ծովակին ջրերէն չկարենանք քաղել (մաքալ??):

Եթէ զՔրիստոս ծովակին ջրերէն կրնանք քաղել եւ ճուղ մը գնելով՝ Յիսուս—Բրիստոս—Որդի—Աստուծոյ—Փրկիչ էր հասկնանք, ինչո՞ւ անխելքաբար ըլլայ նոյն ջրերէն Անոր օրինակն քաղել: Զեզ ծանօթ հնախօսութիւնն՝ հնազանդութիւն բռնածն չըլլա՞յ Պատուելի հատուածագիր: Ուշ գրէք Դ. Վաւերագիրն.

È degno di osservazione, come la terza apparizione, nella quale gli Apostoli viderunt prunas positas et piscem superpositum et panem, Io, l. c. 9, sia stata tolta dai Cristiani di Roma nelle loro pitture come simbolo della mensa eucaristica.—

Տեսայ որ զպկահար էր բոցոքարկուն, բայց թէ ինչ էր խորհէր՝ չգիտեմ. անշուշտ անէծք մը՝ ասանկ խնդրի մէջ մտնալուն:

Դիւանադպիրն կարգաց տրիչ մ'ալ. — . . . E quando al pane è unito il pesce, che in greco dicesi ichthys . . . si dichiara che quel pane è Gesù Cristo figliuolo di Dio Salvatore. Piscis . . . Christus . . . ipse est et panis. S. Aug., tract., in Jo., CXXIII. (Անգ էջ 141).

Զարածճի մը ընթերցումն ընդմիջելով՝ պատմութեան վեկայական առաջարկեց, Ս. Իգնատիոսի մարտիրոսութիւնն 117 ին, եւ Տրայիանոսի արշաւանքն Պարթևներու դէմ 114 ին համարօղ մեծ պատմաբանին (Բաղմալէդ 209):

— Իգնատիոսի մարտիրոսութիւնն 107 ին է, Տրայիանոսի մահը 117 ին, իսկ ասոր այդ արշաւանքն է 106 ին, ո՞ր մեծ պատմադէտ-ժամանակագիր: Իսկ հիմակ ուշ գրէք բեցեք Իգնատիոսի ծանօթ խօսքին մեկնութիւնն, որ քար զայլմակդ թիւան եղաւ Զեզ, Պատուելի:

Ե. Վաւերագիր. Degnissime sono di essere ricordate le parole di S. Ignazio M., Smir, 1-3, III, dove parla dell' apparizione del Signore, « quando venne pros tous perì Petron, e disse loro: Prendetemi,

palpatemi, guardatemi, chò non son io uno spirito senza corpo. E tosto lo toccarono (ipsanto) e credettero, misti alla sua carne ed allo spirito, krathentes ti sarki autou kai tò pneunati. Sembra a noi che quest'ultima frase non sia una esposizione della voce ipsanto, ma significhi partecipazione al corpo del Signore. Ci conferma in questa opinione la frase seguente ed il verso 3; nella prima si accenna a quel che poi si disse il refrigerio dei Martiri, nell' altro sono citate un po' diversamente le parole di S. Pietro, Act., X, 41. P. Minasi. 147 էջ.

Եւ ի՞նչպէս չխղճեցիր, ո՛ր մեծ հնախօս եւ հայկաբան եւ պատմաբան, եւ հիմակ ալ տատուածաբան-բարոյագէտ, ի՞նչպէս խղճ չըրիր այս ծանր խօսքերն բերնէ հանելու. եւ ի՞նչ իրաւամբ. «Այդպիսի մեկնութիւն մը Ս. Իգնատիոսի բանից՝ բռնագրօւել է զայն, եւ ջարաջար բռնագրօւել, մինչեւ առհասարակ Ս. Հայրապետին (Բաղմագէտ էջ 210): Քանի՞ վտանան է ընդ ունկն քո եւ ընդ բերան, Պատուելի»:

Հեղձուցիչ էր օղբ. եւ միշտ իմ կորուսած ժամերուս վերայ կը մտածէի: Արդեա՞նք:

Ահումբն աղաչեց որ այս վաւերագրերն յանձնէ մեծահուն Պատուելիին որպէս զի սորվի եւ օգտուի: Հաւանեցաւ Դիւանապետն:

Ս. Վ. ՆԱԶԱՐԵԹ.

(Շարայարեի)



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՓՈՐՁ ՄԸ

(Շարունակութիւն տես թիւ 6)

23. Կանոնաւոր հոլովումներն ձայնաւորներու կարգով ասոնք են.

ա. Ան. Աղջիկ, Աղջկան, Աղջիկե, Աղջիկով. Զարգացում, — ցման, — ցումե, — ցումով.

բ. Ե. Կայսր, — սեր, — սրե, — սրով.

գ. ԵԱՆ (երկր). . . թիւն, — թեան, — թեմե, — թիւնով. կամ — թեամբ. Ծնունդ, ծննդեան, ծննդեմե, ծնունդով.

դ. Ի. Աշխարհաբարի մէջ տիրող հոլովումն է, բաց ի սեր կանոնաւոր բառէն, եւ ու հ. ուս ի մէկ մասէն, եւ Անկանոն հոլովումներէն.

ե. ՈՅ. Սէր, տիրոյ, սէրե, տիրով. Ամիս, ամսոյ, Աստուած, Աստուծոյ, Աստուծաւ, Աստուծով (ծամով).

զ. ՈԻ. Ծով, ծովու, ծովե, ծովով. Մարդ, մարդու, մարդե, մարդով. Տղայ, տղու, տղե, տղով, (տղայե, տղայով). Մանչ, մանչու, — ե, — ուլ. Ժամ, — ու.

է. ՈԻԱՆ, Տարի, — րուան, — րե, (տարուքն) տարիով. Ամիս, — տուան, ամսե (ամսուքն), ամսով (ամիսով). Շարաթ, — թուան, չարաթե (չարաթուքն), չարաթով. Օր, — ուան, օրե (օրուքն), օրով. Ժամ, — ուան, ժամե, ժամով.

ը. ԻՈՅ. Եկեղեցի, — ցւոյ, — ցրե, — ցրով.

24. Անկանոն հոլովումներն են.

ա. ԱՅ — Օ. Հայր, հօր, հօրմե, հօրմով (հօր հեա).

բ. ՈՁ. Կին, կնոջ, — ոջմե, — ոջմով. Տէր, տիրոջ.

25. Յոգնակիներն կանոնաւոր են ընդհանրապէս. (ն)եր, (ն)երու, (ն)երե, (ն)երով.

26. Թողնակի զարտուղի հոլովումներ են.

ա. ՈՒՆՔ — ԱՆ, վերջահոլովներն. որոնց յոգնակի ուղղ. ունք ալ կ'ըլլայ, եւ կը հոլովի այսպէս. — ունք, — անց, — ունքէ, — ունքով:

բ. Մարդիկ, — զկանց, — զկանցմե, մարդկանց հետ:

գ. Մարդեր, մարդոց, — ոցմե, (մարդոցմով):

դ. ՆՐՔ, հարսնիք, հարսանեաց, հարսնիքէ, — ով. Ասոնք եր կամ ներ յոգնականաւիւրջ ալ ունին:

27. Դիտելի է որ բուն օրինաւոր հոլովն երկու է աշխարհարարի մէջ. եղակի սեռական եւ արական. արականը միշտ սեռականին նման, որով միւ իսկ բացատրական եւ զործիական՝ ինչպէս նաեւ յոգնակին ամբողջ՝ որոշեալ վերջաւորութիւններով կը կազմուին:

(Իրաւ է թէ քերականութիւնը կազմողն ինքնին ժողովրդեան չրթունքն է. բայց վա՛յ այն քերականութեան զխուճն որ ժողովրդեան բերնին թափթփուքովն միայն ջանայ իր գոյութիւնն ապահովել: Քերականութիւնն ժողովրդեան բերնին մէջ իր սաղմնային վիճակն կ'ընդունի, այլ հազիւ թէ իր գոյութեան ծանօթանայ՝ (այդ չրթներուն ուսից դուրս եկաւ) օրինաւոր եւ հրամանատու կը դառնայ. եւ ի հարկէ՛ւ Ըսելիք չկայ թէ պարզութիւնն ամեն բանէ առաջ է, իցի՛ւ կարենալինք՝ ինչպէս երբեմն ջանացին ոմանք ընդունայն՝ Դ հոլովման վրայ ձուլել մեր ամբողջ բառերն, բայց զի հնար չէ՝ ի հարկէ ընդունելու ենք հաստատուն օրէնք մը, կ'ենթադրուի հայ լեզուի բնական եւ բանական օրինաւորքէն, եւ ըստ այնմ ուղղելու ենք նաեւ այն անհասունւմ եւ անվերջ փոփոխութիւններն՝ որոնք ժողովրդային չրթունքէն կը թուչտին կը թափթփին, իւրաքանչիւրին՝ բնագաւառին՝ եւ քիչ կամ շատ զրոյց աշակերտութեան համեմատ Գննեցէք եւրոպական նոր լեզուներու կազմութիւնը, կը համոզուի՛ք թէ ոչ):

28. Բուն աշխարհարար ձեւով հոլովումներուն մէջ ձայնաւորի փոփոխութեան կանոնն միայն եղակի սեռականին եւ արականին համար է. իսկ մնացեալներն անփոփոխ կը մնան: Երբեմն այդ իսկ չգործադրուի, երբ աշխարհարար ձեւով Դ հոլովման համաձայն հոլովուի բառ մը. Լոյս—լոյսի:

Ս. Վ. Ն.

(Շախյարեյի)



ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ



ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԿՈՒՍԻՆ

(Շարունակութիւն տես թիւ 7)

«Ի հաստատել ինչ Աստուծոյ ի ծածուկ խորհրդեան իւրում, բազում ժամանակօք յառաջ քան զարդիւնս իրին՝ սովորին սուրբ Գիրք համարել զայն իրբն եղեալ: Զորօրինակ Եսայի ասէ զԲրիստոսէ: Մանուկ ծնաւ Մեզ, որդի տոռաւ մեզ: Եւ զի՞նչ կամիցի ասել, զի չեւ եւս էր ծնեալ յայնժամ Գրիտոսս, այլ համարէր մարգարէն զխորհուրդս Աստուծոյ որպէս զմարդկան, որ բազում ինչ դնեն ի մտի ի նանիր: այլ ընդհակառակն՝ կամացն Աստուծոյ անվրէպ եւ անհրաժարելի են գործքս Այսպէս լուսաւորեալ մարգարէն ի բարձանց, եւ նախատեսեալ զխորհուրդն մեծ Աստուծոյ առաքելոյ զորքին իւր յաշխարհ, ցնծայ ի հոգի իւր, եւ համարի անգափն գիրտն յարդիւնս եկեալ, զի տեսանէ վճռեալ զայն անդարձ: Եւ է իսկ ի դէպ որոց մարգարէիցն այս եղանակ խօսից եւ ցոյցանէ զմեծ վայելչութիւն Աստուծոյ՝ որ խօսէրն ի նոսին: Զի որպէս մեծն Տերառելիանոս ասէ. «Վայելուչ իսկ է ոսոսումն զէն բնութեան, որում չիք խախտ ժամանակի, ունեկ որպէս եղեալ զօր հրամայէն. զի յախտեանք սա նմա անխախտելի ունին զժամանակ» Վասն որոյ ճշմարիտ է եւ ոչ սխալիմ ի հաստատելն, զի կոյնն ամենօրհնեալ յառաջումէ վայրկենեէ կենաց իւրոց էր Մայր Փրկչին, ոչ ըստ խօսից մարդկան, այլ ըստ պատգամացն Աստուծոյ այսինքն բոս սովորական բարբառս Ս. Գրոց, որպէս լուայք» (Անդ. 73-75.):

Զգիտեմ թէ կարելի՞ է քան զայս առաւել կորովի ներս-

մտութեամբ, առաւել բաղմոկողմանի հմտութեամբ եւ աւելի խորախորհուրդ իմաստութեամբ պաշտպանել ճշմարտութիւն մը՝

Ո՛վ ուրախարար սքանչելեաց, Եկեղեցին զոր իւր թշնամիք կ'ամրաստանեն իբր հակասող բանականութեան, ամենուրեք եւ յամենայնի հանդիսացած է նորա ամենէն անձնուէր բարեկամն, նորա ամենէն բոցաշունչ եւ անպարտելի տխուր յաննա Ամենէն խորին ու անթափանց խորհրդոյ մէջ իսկ ուր աշխարհիկ իմաստութիւն կանգ կ'առնու, եւ ուր զիւաշունչ հերետիկոսութիւն կը հայհոյէ կատաղութեամբ՝ կաթողիկէ Հաւատքն լուսոյ եւ իմաստութեան ճառագայթներ կը սփռէ ամէն կողմ՝

Անշուշտ չզիտեն ինչ որ կ'ըսեն անոնք որ կը դատապարտեն Անարատ Յղութիւնն իբրեւ նորաստեղծ վարդապետութիւն «Աշխարհի յայանեալ վարդապետութեանց ամենէն հինն է այն. Եկեղեցիէն աւելի հին, Աւետարանէն աւելի հին է այն, Յիսուսի Քրիստոսի հետ էր յառաջ քան զլինելն Աբրահամո», անով կը բացուի Աստուածաշունչը՝ Արդարեւ այդ վարդապետութիւն չէ՞ որ յայանեալ է Տեառն Աստուծոյ այս պատգամին մէջ. Եղից քննամութիւն ի մէջ քո եւ ի մէջ կնոջդ՝ ի՞նչ կրնանք տեսնել աւելի բացորոշ եւ մեկին» (¹)

Եկեղեցին նոր վարդապետութիւն չստեղծեր ու չկարէ ստեղծել, հետեւաբար 1854 ին տիեզերական Եկեղեցւոյ պատկառելի Գլուխն, երջանկայիշատակն Պիոս Թ. ուրիշ բան չըրաւ բայց միայն սահմանել (définir) եւ քրիստոնեայ աշխարհին պարտաւորիչ հռչակել ինչ որ դարերէ ի վեր ամենուին ծանօթ ճշմարտութիւն մ'էր արդէն՝ Պատմական եւ աստուածաբանական ճշմարտութիւն մ'է թէ Ս. Եկեղեցին չփոխուիր, բայց կը յառաջադիմէ՝ Որչա՛ր վարդապետութիւններ կան զոր մեր նախնիք ընդ ազօտ եւ լռելեայն (implicité) կը դաւաանէին, մինչ մեք կը հաւատանք այսօր որոշապէս եւ բացայայտ (explicité)՝ «Հաւատոյ մասունք, կ'ըսէ Հրեշտակային Վարդապետն, մասնակապ յաջորդութեամբ աճեցան ո՛չ ըստ նիւթոյ, այլ ըստ բացասութեան եւ որոշ գաւանդութեամբ»

(¹) AUG. NICOLAS, La Vierge Marie et le plan divin. T. II. P. 125-126.

Եթէ Եկեղեցին՝ յառաջ քան զայս թուական՝ թոյլ տուաւ ալ եւ ալ ժամանակաց մէջ որ ամեն աստուածաբան ազատութեամբ յայտնէ իւր կարծիքն, նախ պէտք է մոռնալ թէ ինքն միշտ անոնց հետ եղաւ, որք կը պաշտպանէին իւր սիրելալոյն վարդապետութիւնն, եւ երկրորդ փոխանակ զայն կեղեցու՝ պէտք է մեծապէս շինութիւն ամուր, սքանչանալով այն զերազանց խոհեմութեան եւ ներողամտութեան ոգւոյն վրայ, որով յարգած է նա միշտ իւր որդւոց օրինաւոր ազատութիւնն:

Դարուս քաջամուտ աստուածաբաններէն եւ ամենէն պերճալիզու բանախօսներէն մին, մեծատաղանդն Հ. Մոնսապրէ բոլոր այս տեսութիւններն անկողմնակալ ճշդութեամբ կը պարզէր Բարիդի Մայր-Եկեղեցոյ բեմէն ի լուր քրիստոնեայ աշխարհին: (1)

Իւր վարդապետական սահմանն (définition dogmatique) յայտարարելէ յառաջ, նոյն Ս. Քահանայապետը Պիոս Թ. մանաւոր չրջաբերականաւ մը (2 փետր. 1849) բոլոր քրիստոնեայ աշխարհին կարծիքը խնդրեց. 616 արքեպիսկոպոսք պատասխանելով այդ չրջաբերականին՝ եռանդնալից թախանձանօք կը խնդրէին հանդիսաւոր եւ անսխալ վճիռն, եւ կը յայտնէին միանգամայն թէ իւրեանց կղերն եւ ժողովուրդք արդէն իսկ ջերմապէս կը հաւատային Անարատ Յղութեան վարդապետութեան: (2)

Երբ հին եւ նոր աշխարհի ամեն կաղմկն՝ Գերմանիա, Աւստրիա, Ֆրանսա, Անգլիա, Սպանիա, Միջագետք, Թունիս, Պաթալիա, Ալժէրի, Սէյլան, Միացեալ Նահանգք, Պրազիլեայ, միաշունչ եւ միաբերան հռչակեցին իւրեանց դարաւոր հաւատքն Անարատ Յղութեան, յայնժամ միայն Եկեղեցին լսելի ըրաւ իւր զերագոյն իշխանութեամբ այս հանդիսաւոր խօս-

(1) T. R. P. Monsabrè. Conférences de N. D. de Paris, Carême 1897. P. 314-315)

(2) Ֆրանսայի գիտուն աստուածաբաններէն մին՝ հաւաքելով զանազան երկիրներէ եկած վկայութիւններն գեղեցիկ «Հաւաքածոյ» մը յօրինած է յորմէ պիտի կրնան մեծապէս օգտիլ անոնք որ կը բազման աւելի մանրամասնօրէն առումնասիրել այս կարեւոր հիւսիսը. Recueil des lettres et actes des Evêques sur l'Immac. Concept. de Marie; par S. E. le Cardinal Gousset.

քերն ի ցնծութիւն հրեշտակաց եւ ի հրճումնս վերածնեալ մարդկութեան :

«Յիսուսի Բրիսատսի Տեառն մերոյ, որոյց առաքելոյց Պետրոսի եւ Պօղոսի եւ Մեր իշխանութեամբ կը յայտարարեմք, կը ծանուցանեմք եւ կը սահմանեմք, թէ այն վարդապետութիւն որ կ'ընդունի զԱմենատուրս Կոյսն Մարիամ՝ ամենակարող Աստուծոյ մասնաւոր շնորհօքն եւ արածնութեամբ եւ Յիսուսի Բրիսատսի մարդկային ազգի Փրկչին արդեանց զօրութեամբ զերծ պահեալ յարատոյ սկզբնական մեղաց անդստին յառաջին վայրկենէ իւր Յղութեան, յԱստուծոյ յայտնեալ է եւ հետեւարար ամէն հաւատացեալք պարտին հաւատալ հաստատուն եւ անյողգողք կերպիւն»

Երեք դար յառաջ ուրիշ տիեզերական ժողով մը՝ Տրիսենդեան Ս. Ժողովը՝ յետ հաստատելոյ թէ սկզբնական մեղքն սկսեալ յԱդամ՝ տարածեցաւ իւր բոլոր սերնդեանն, այս նշանակելի խօսքերն կ'ստորագրէր. «Սոյն այս Ս. Ժողովը կը ծանուցանէ թէ զիտաւորութիւն չունի իմանալ այս վճռով ուր սկզբնական մեղաց վրայ է խնդիրն, զերանելի եւ զանարատ Կոյսն Մարիամ զԱստուածամայրն, այլ իւր զիտաւորութիւն է որ պահուն երջանկայիշատակ Սեքստոս Դ. Քահանայապետին սահմանադրութիւնքն հանդերձ անդ պարունակեալ պատիմներով զօրս կը նորոգէ Ս. Ժողովոս» Խնչպիսի յարատեւ եռանդեամբ պաշտպանած են զայս վարդապետութիւն ամեն անոնք որ վառքն են քրիստոնեայ մարդկութեան, զիտութեան եւ սրբութեան. միացած են միշտ յազիմական կոթող կանոնելու համար ընդդէմ հայհոյիչ բերաններու : Ահա վկայութիւն մը որ յոյժ բարձրէն կու գայ, «Դիտեն ամենեքին կ'ըսէ Յիսուսի Բրիսատսի փոխանորդն, թէ ո՛րքան եռանդեամբ ուսուցած, հաստատած եւ պաշտպանած են Անարատ Յղութեան վարդապետութիւնն ամենէն բարեհամբաւք ի կրօնաւորական Ուխտից, ամենէն հռչակաւոր աստուածաբանական Համալսարանք եւ ամենէն քաջասուն վարդապետք ի զիտութիւնս աստուածային իրաց» (1)

(1) Յայտնի է ուսումնասիրաց թէ ինչպէս կրօնաւորական Միաբանութիւնք ամեն գարուց մէջ բանիւք եւ արդեամբք ջերմեռանդն եղած են Անարատ Յղութեան ամենորհեալ Տիրամբր Այն կրօնաւորական Միա-

Գարով Արեւմտեան Եկեղեցւոյ, Կարմեղեան, Փրանկիսկեան եւ Յիսուսեանց նման զիտութեան ու սրբութեան ոլլատուղներով բեզմնաւոր բարերար եւ առաքելական միաբանութիւններ անյողզող յարատեւութեամբ քարոզած եւ պաշտպանած են Ամենասուրբ Կուսին հրաշալի եւ սիրելալոյն տառանձնաշնորհումն: Սխալ է ոմանց կարծիքն թէ Ս. Դոմինիկոսի կարգն ընդլիմախօս եղած լինի սոյն վարդապետութեան: Ս. Թովմասէ, Ս. Վինչենցիոս Ֆէրարեանէ, Ս. Պիոս Ե. է ըսկըսեալ մինչեւ Երանելին ժուռալն տը Սաքս:

ՆԵՐՍԷՍ Յ. Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

(Շարայարեյի)



բանութիւնն որ մեր Ազգին ամենէն բազմադիւն բարերարն եղած է եւ Հայրութեան ամենէն ճշմոյրիտ փառքն բողոքակիւրթ աշխարհին առջեւ, հաւատարիմ աւանդապահ Հայ. Ուղղափ. Եկեղեցւոյ անսողիւտ վարդապետութեանց եւ հոգեւանդն մրցակիցը մեր շնորհաղարդ Ս. Հարց, Կաթանձեյի ջերմեռանդութեամբ փոյլած է միշտ առ Դշխոյն անարատ յղացեալ Բաղամբ ի նոցանէ, սկսեալ մեծանուն հիմնադրէն, երանաշնորհ Միխիթար Աբրայե մինչեւ Հայր Գարրիէլ Աւետիքեան, Հ. Աւգերեան, Հ. Միքայէլ Չամչեան, Հ. Յովսէփ Գաթրըճեան, Հ. Ղ. Էւսեղ. Ալիշան, եւ այլք թանկագին էջերու մէջ անմահացուցած են եւ յատարա իւրեանց սրգիական սէրն առ Մայրն Աստուծոյ եւ Մարդկան

ԲՆՈՒԹԻՒՆ (NATURA)



Կան ոմանք որ կ'ըսեն. բնութիւնն (natura) է որ ամենայն ինչ յոչեութիւնէ ի զոյ ածած է. առանց Աստուծոյ կարեւորութեան: Այսու՝ ստորայեղական խորամանկութեամբ՝ մոռացումն առնել կամին զԱստուած, եւ առ ի յուրանալ զԱստուած՝ կ'ուզեն Աստուած անուան տեղ բնութիւնն բառը դնել, որպէս զի կարծել ասն թէ Աստուած այլ բնութիւնն է որ զամենայն ինչ արար: Մենք այս անհեթեթ կարծեաց անպատեհութիւնը (absurditas) պիտի ցուցանենք. հարցանելով նախ եւ յառաջ թէ ի՞նչ է բնութիւնն:

Ի՞նչ կ'իմացուի, ուրեմն, անուամբս բնութիւն: Մենք կը խոստովանինք որ բոլոր տիեզերք, համայն արարածք յԱստուծոյ ստեղծեալ են: Եւ եթէ կը պնդեն հակառակորդ չարամիտք թէ ամենայն ինչ որ է ի բնութենէ է ստեղծեալ եւ անուամբս բնութիւն կ'իմանան զօրութիւն ինչ մածեալ ի նիւթ կամ յայն ամենայն ինչ որ արարած յորջորջի, այն ժամանակ ըստ որում այլուր կը հաստատէինք՝ աստ եւս կը կրկնեմք որ բնազանցապէս հակասական է ո՛ր եւ իցէ արարածոյն ինք իրմէ առանց պատճառի յոչեութիւնէ յեութիւն դալը:

Իսկ եթէ անուամբս բնութիւն՝ հակառակորդքն իմանան ի զգալի յիրաց արտաքոյ ինչ անստեղծ, անեղ, այն ժամանակ ոչ այլ ինչ է եթէ ոչ՝ Աստուած անունը փոխել եւ բնութիւն անուն տալ Աստուծոյ.— Ասոր նկատմամբ՝ Սենեկա՝ թէպէտ եւ հեթանոս սակայն իւր բնական մտաց լուսով լաւապէս խելամուռ եղաւ: Արդեամբ իսկ, նա զայսմանէ թողուց զրուած հետեւեալ հակիրճ եւ ճշգրիտ բառեր. «Ամենայն առերբ րաբք, ասէք, ի բնութենէ գոյ առ մեզ, այլ ազէ՝ ո՛չ տեսնէք զբնութենէ եւ զղիպաց ճառելով ոչ զայլ ինչ առնէք եթէ ոչ սեպհականիկ զայլ իմն անուն Աստուծոյ: Բնութիւնն յորմէ զամենայն ինչ ընդունել պնդէք, զի՞նչ է եթէ ոչ Աստուած եւ աստուածային իմացութիւն: Տուք զօրպիտի եւ կամիք անուն

ամենայն գոյութեանց Արարչին (Auctor), յորջորջեցէք ամենայն ստորոգելեօք մեծին Արամազդայ, զոգջիք զի է գեր ի վերոյ քան զամենայն, որ լանձանձէ եւ մատակարարելով տընտեսէ զամենայն տիեզերս եւ թէ ի ձեռին ունի զոխակալ շանթս . . . բնութիւն (natura), դէպք (casus) զիտ'րք եւ հաճոյ թուեցի Ձեզ անուանեցէ՛ք, սակայն մնաոյցէ (Աստուած) միշտ նոյն եւ միայն սկիզբն ամենայնիս (De benefic. Libre. IV cap. VIII)։ Կարող է մարդս յաւակնութեամբ փոխել Աստուած անունը եւ փոխանակ այնր այլ անուն սեփականել Աստուծոյ, զոր օրինակ բնութիւն, զէպք, եւ սակայն չէ մարթ ընկենուլ զայն յաթսոյ։ Աստուած հանապաղ նոյն է, Գերազոյն հեղինակ բնութեան, վարիչ անչափ կազմածոյ (machina) աշխարհիս։ Արդի անհաւատից զժողովրդի ջանքն է քննել Աստուծոյ սուրբ անունը մարդկային յաբէն, ի հնարս հայթայթանաց մասնել ստանայական հնարիք մոռացնել տալու այդ երկրպագելի անունը, որպէս զի չի արուի այն պատիւ եւ երկրպագութիւն որ սեպհական է Աստուծոյ, մինչեւ դատատանց զահելէն եւս ողալակել բարձրաձայն եթէ բնութիւնն է սկիզբն եւ արարիչ ամէն բանի. այսու՝ զիտութեան եւ յուսաւորութեան երանգով կը պատրաստուի մի նոր ցեղ, նոր սերունդ առանց Աստուծոյ, կամելով ի բաց վանել զԱստուած յամենայնէ։ Բնութիւնն է, կրքն, անաստուածք, որ աշխարհիս յօրինուածոյն հեղինակ է հանգիստացեր. բնութիւնն է որ զայն կը վարէ եւ կը պաշտպանէ։ Մինչդեռ յառաջագոյն արդեամբք իսկ Աստուծոյ կը սեպհականուէր տիեզերաց գոյութիւնն, մեր ժամանակներու մէջ ի սինդորաց ամենայն ինչ բնութեան կը յատկացուի ի բաց բաճնալու համար մի գերազոյն էութեան Գաղտնաբար։ Սակայն կենդանի է Տէր, անոնց ջանքն ի գերեւ պիտի ելլէ. վասն զի ինչպէս նախադէս աշուր եւս յիշատակեցաք. վերստին կը կրկնեմք պատգամն աստուածային, զցանկութիւն մեղաւորաց կորիցէ։ Աստուծոյ էութեան նշանները, զբաւականները կարի տեսանելի են, որք բարձրաձայն գոչմամբ կը հաստատեն նորա էութիւնն։ Մեր սրտին մէջ անքննելի է Աստուծոյ էութեան զաղափարը, յայժ զօրաւոր է ձգտումն սրտից մերոց առ նա։ Չպիտի կարողանան երբէք մեր սրտին մէջ գրուած Աստուած անունը քերել, այն զրոշմեալ տառերը քննել, նորա անունը ամէն արարածներուն վերայ կիւրել։ — Բնութիւնն անզօր է, անբաւական է ի մէջ բերել ար-

զատիս անդուլ հաստատութեամբ, ըստ որում տեսանեմք, կ'ըսէր կիկերոն, եր'է ընտթիւնը պատճառ է բովանդակ արեղիւրաց գոյութեան, զիւրագոյն եւս մարթ է պատճառ հանդիսանալ Գործոց որք չեն այնչափ զարմանալի, զորօրինակ ամենայն մարդոց սեպհականեալ Գործոց, եթէ ծագիկ ինչ, մի նկարուած վարդ չի կրնար ըսուիլ բնութեան գործ, եւս առաւել չէ մարթ հաստատել զայդ իրական ճշմարտութեան նկատմամբ, այնչափ մեծ եւ դժուար տիեզերաց նկատմամբ։ Նոյն իսկ մի տխմար չէ կարող զիւրաւ համոզուիլ որ մարդուս, մի անձի կենդանագիրը, բնութեան գործ լինի ի վերայ այսր ամենայնի ումանք կը պնդեն թէ համոզուած լինին առանց Աստուծոյ բնութենէ յօրինուած լինի մարդս, ո՛չ աններկի ապշութիւն։ Ծագր կը պատճառէ մարդուս եթէ չլինէր եւս ըստ ինքեան ամենամեծ ամպարշտութիւն։—Նշանաւոր աստեղագէտ Ալֆանսո Կիրչերը մի բարեկամ ունէր այն աստիճանի յիմար որ Աստուծոյ էութեան նկատմամբ կը տարակուսէր եւ ամենայն ինչ դիպաց եւ բնութեան արդասիք կը վարկանէր։ Յաւուր միտւմ զգոն աստեղագէտը կամեցաւ իրական օրինակով մը համոզել իւր բարեկամը Աստուծոյ էութեան նկատմամբ եւ բժշկել անոր միտքն այն խելագար խօթութիւնն որ բնութեան եւ զիպաց գործ կը համարէր ամենայն ինչ, ա՛ն՝ օրինակն որով ապաքինեց մեզկախորհուրդ միաքին։—Զետեղեց (բարեկամի բացակայութեան ժամանակ) զխամոցի անկիւններէն մէկուն մէջ մի մեծապայծառ մեքենայ որ երկնագունդը կը ներկայացնէր զիւսուր մարմնոց շարժմամբ։ Մտաւ բարեկամը ի զխամոց անկարացաւ հանգուրժիկ իւր հրացումը յայտնել, նկատելով մի պուխ գործոց, մի չքնաց յօրինուած, կը հարցանէ, ազատամիտն, այն հրաշակերտի հեղինակին ո՛վ լինելը։—Կը պատասխանէ աստեղագէտը, այդ երկնագունդը ո՛չ հեղինակ ունի եւ ո՛չ յօրինող, բնութիւնը զայն յօրինած է եւ գէպքն անդ զեռեղած է։—Կը գոչէ անաստուածը, դուք կը կատակէ՛ք, պարոն, եւս աղայ չեմ որ խաբուիմ, այդ յօրինուածը բնութեան գործ չէ, եւ գէպքով անհնար է ասոր ի զխամոցիս զետեղումը։—Ապա ուրեմն, ինչո՞ւ, կը պատասխանէ Kircher(ը) մինչդեռ չէք ուզեր հաւատալ որ մի մեքենայ, համեմատութեամբ իրականին ամենանկատար, այսր եւ կամ լինի դեպքով եւ թէ ի բնութեան ծագում առած լինի, ինչո՞ւ կը պնդէք ուրեմն որ սքանչելահրաշ ներկայացուած

երկինքը իւր մոլորակներով իւր միլիոնաւոր հաստատուն փայլուն սասողերով եւ բովանդակ կողմածն ոչխարհիս զիպայ գործ եւ կոյր բնութեան արգասիք յինի յոստովանեցէք ձեր անզգայ եղանակը եղելութեանց մասին, մի արհամարհէ՛ք եւ ազգի ազգի կերպարանաց տակ մի՛ դնէք Ամենակարողին ամենասքանչ գործերը — Լուեց բարեկամը եւ համոզուած այսօրինակ համոզիչ փաստէ փարասեց իւր մտաց կտակածը եւ խոստովանեցաւ բնութեան Արարչին էութիւնը՝ Եւ դարձեալ՝ Ի՞նչպէս կարելի է բնութիւնը՝ որ զուրկ է իմացութենէ՝ պատճառ լինի տիեզերաց Կարելի՞ է ենթադրել, որ մի նախանկար օրինակ ինչ որ նոյն իսկ քաջահռչակ նկարիչներէ մեծաւ դժուարութեամբ կ'ընդօրինակուէ, մա՞րթ է զմտաւածել նիւթական եւ իմացութենէ զուրկ բնութեան գործ լինի, եւ չէ թէ մի բարձրագոյն մտաց, աննիւթ էակի գործ։

Եթէ մենք զգոնութեամբ մտախորհ լինինք եղելոց խոսնութեան նկատմամբ, յայնս գրոյմուած կը տեսնենք անջնջելի տառերով Աստուծոյ ծայրագոյն կտաւարելութիւնը որ կամեցաւ զամենայն ինչ արարչագործել — Ապաքէն յարարածս կը նըշմարուի մի կարգադրիչ միտք անհամեմատ բարձր մարդկային մտքէ։ Յերկնային անբաւ մեքենային ի մէջ ամենարագ շարժմանց անհրաժեշտ էր մի անասման գիտութիւն որով նախատեսէր բոլոր կարելի եղած ընդհարումները, հաւասարակշռել մամնոց զօրութիւններն որք անդուլ անգաղար կը թռաւին յանջրպետութեան (in spatio)։

Շարայարելի

Ս. Վ. Տ. Աբրահամեան

(յԱբասնուշ)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՒՀԻ ՄՈՆԻԳԱՅԻ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ԱՔԻԿԵԱՆ

(Շարունակութիւն տես քիւ 7)

Դեռ ոչ մատուռ ունէր եւ ոչ եկեղեցի. Մարտինոս Ե. Պապը՝ Օգոստինոսի վանականաց կարգին յանձնուած սուրբ Տրոփոնիոսի փոքր եկեղեցւոյ մէկ տնկիւնը դրած ըլլալով զանիկայ՝ պանդխտաց անթիւ բազմութիւնը չէր կրնար ըստ հաճոյս գերեզմանին բոլորաբը չրջիլ. Մատթէոս Լօտի՝ լիովին կատարել ուզելով սկսած բարեգործութիւնը, նոյն եկեղեցւոյ մէկ զին մատուռ մը շինել առաւ ի պատիւ Սրբուհի Մոնիգայի, եւ անոր նշխարքները հոն փոխադրուեցան. Հաւատացեալք խուռն բազմութեամբ կը դիմեն հոն, եւ որովհետեւ անոց մեծ մասը մայրերէ, նա մանաւանդ վշտացեալ մայրերէ կը բազկանար, Եւդինոս Դ. սրբազան Քահանայապետն՝ իրենց բազմանոց զիջանելով, կը հիմնէ սրբուհի Մոնիգայի պաշտպանութեանը տակ, քրիստոնէ մայրերու ընկերութիւնը. ասկից կը ծագի առաջին գաղափարը սոյն տեսակ ընկերութեանց, բայց ժամանակը դեռ հասած չըլլալով, վաղափրիթ ծաղկի մը պէս, այն ընկերութիւնն օր մը միայն կր տեսնուէր. Այսու ամենայնիւ այն ընկերութեան առթիւ, արուհւոյն Վերմուանդութիւնը վերջապէս ամէն ընտանեաց մէջ ընդունելութիւն կը գտնայ. Անանկ օր դարազրուիս չեղած, ամէն կողմէն ազերասնեքներ կը թափին սրբուհւոյն արժանի հոյակապ եկեղեցւոյ

մը չի նութեանը համար: Մոնիզայի այս ծայրագոյն պատիւը
առաջ Գաղղիոյ երկրին վերապահուած է, որուն համար մա-
նաւանդ Մոնիզա իւր գերեզմանէն ելած է, ըստ այնմ կարծես
թէ ինքն ալ նախատեսելով այնպիսի առանձնաշնորհութիւն
մը, եւ ուզելով նախապէս պատուել զանիկայ, իւր եպիսկո-
պոսներէն մին, Կարաթինայն էսգուզլիլա, Ռուանի արքեպիս-
կոպոսը, կանգնել կուտայ այն առաջին եկեղեցին, եւ անով
սրբուհի Մոնիզայի փառքը լիապէս կը կնքէ: Միայն թէ բա-
րեպարիչաւ եւ փափկասուն զգացմամբ մը՝ փոխանակ սրբուհի
Մոնիզայի նուիրելու այն տաճարը, սուրբ Օգոստինոսի տնուան
կը նուիրէ. եւ ասով այն մեծ վարդապետը, այն սիրալիր որ-
գին, իւր մօր գերեզմանն եւ մարմինն իւր տաճարին մէջ
պատասպարելու մեծ ուրախութիւնն եւ պատիւը կ'ունենայ:

Աւագ խորանին թէ աջակողմը եւ թէ ձախակողմը, մէյ
մէկ մատուռ կը տեսնուին. աջակողմինը՝ ի պատիւ սուրբ Օ-
գոստինոսին, եւ ձախակողմինը՝ ի պատիւ սրբուհի Մոնիզայի.
երկուքն ալ նոյն ձեւով, նոյն դեղեցկութեամբ շինուած, ինչ-
պէս այն երկու հոգիքն, որոնց նուիրուած են: Հոն իրեն սե-
փական մատարան մէջ, եւ խորանին ներքեւը դրուած, ապախիէ
գերեզմանաձեւ սափորի մը մէջ, կը հանգչի սուրբ Օգոստի-
նոսին մօրը մարմինը. համառօտ արձանադրութեամբ մը, որ
այցելու պանդխտին ուշադրութեան արժանի է:

«Աստ հանգչի Մարմին Ս. Մօր Մանիզայ»:

Նոյն մատարան մէջ, խորանին ձախակողմը, կողմնակի
պատին կոթնած, եւ սուրբ զգուշութեամբ մը պահուած, կը
տեսնուի սրբուհի Մոնիզայի հին գերեզմանը. ճերմակ քարէ
շինուած գաղաղ մը, զտրդարուած վազեմի քանդակապարծու-
թեամբ ըլլորակաձեւ տկոսներով, սոխեծի մը չորս ձանկերուն
վրայ հաստատուած, եւ վրան փորուած սրբուհւոյն արձանա-
քանդակ պատկերը՝ պառկած գիրքով, եւ կատարեալ համե-
տութեամբ հագուած, չիրմին վարի գին հետեւեալ արձանա-
գիրը կը կարգացուի:

«Աստ է

Գերեզման ուր Եր. Մոնիզայ մարմինն
Հանգեաւ ամս ՌիւՍ. առ Տիբերիան Դրունս
դօր

Վասն հրաշիցն գործելոյ ի ձեռն նորին
ի քամանակի փոխադրութեան

Բարեպարիշտ որդիքն փոյթ տարին փոխադրել

Ի յաննան վայրէ ի նշանաւորագոյն տեղի

Յամի փրկութեան ՌՆՁԶ»

Մատրան կանակի եւ կողմնակի պատերն եւ գմբէթը ըս-
քանչեւուպէս նկարուած են, եւ կը ներկայացնեն սրբունի Մո-
նիզայի վարքը, կամ մանաւանդ իւր ակնկալութիւններն եւ
ուրախութիւնները, կը տեսնանք նախ որ արտասուալից աչ-
քերով եւ երջանկութեան նշոյլ մը շողալով ճակտին վրայ,
մտիկ կ'ընէ ծերունի եպիսկոպոսն, որն որ կ'աւետէ իրեն այն-
քան արտասուաւոր որդւոյն ապագայ դարձը: Աւելի անցին կը
նկատենք նոյն դէմքն, որն որ նոյնպիսի ցաւոց մէջ ընկղմած,
սակայն այս անգամ ուրախութեան նշոյլն աւելի վայրուս,
մտիկ կ'ընէ հրեշտակն՝ ըսելով իրեն, յարուս դուն կը գտնուիս՝
իմքն ալ ոլխաի գայ որով կը հասկցնէ իրեն՝ ապագային մէջ
այն կրկին զոյութեանց՝ մօր եւ որդւոյն միանալը եւ ցնծու-
թիւնը: Աւելի անցին կը դիտենք որ սրբունւոյն դէմքին վրայ
արտասուաւոր հետքն ալ կ'որսուած են, մանաւանդ թէ նայ-
ուածքն ալ անուշ՝ սուրբ ուրախութիւն մը կը ծաւալէ. վասն
զի նոյն վայրկեանը սուրբ Օգոստինոս իւր դարձը կ'աւետէ
իրեն, Վերջուպէս կ'ը գտնանք Սրբունին մահուան անկողնոյն
մէջ, հրճաւորից եւ նշողազարդ դէմքով. որդիքը բոլորաբը,
Օգոստինոսի ձեռքն իւր ձեռացը մէջ, չրթունքներուն վրայ
անուշ ժպիտ մը, աչքերն երկինք սևեռած, հոգին աւանդելու
վրայ, կրկին անգամ տեսած եմ այն նկարները. թէպէտ եւ
այն ատեն տարիքով երիտասարդ՝ չէի ճանչնար ժամանակիս
թախծութիւններն, եւ ոչ իսկ գաղափարն ունէի այն արտաս-
ուաւոր, որոնցմով քրիստոնէ մայրերու աչքերը լի էին, եւ ամե-
նեւին միտքս չէր ինկած այն ատեն ընծայելու իրենց մխիթա-
րութեան եւ քաջալերութեան սա փոքրիկ նուէրս, սակայն
կրկին անգամին այն նկարներու ազնուութիւնն, անուշու-
թիւնը տեսնալով, եւ սուրբ տեղւոյն խորին լուծեան մթոյն
մէջ, հասկցայ որ մեծ ցաւերու եւ վիշտերու պատսպարան ըլ-
լալու, զանոնք մեղմացնելու, եւ անզուգական ակնկալութիւն-
ներով ներեցէք ինծի սա խօսքիս իմաստը, դիւթելու շատ
յարմար տեղ մ'էր:

Մինչդեռ 1566 ին այն նկարները լինալու վրայ էին,
ժամանակներն ալ օրէ օր մեծամեծ փոթորիկներ կը պատրաս-
տէին եկեղեցւոյ հորիզոնին վրայ. Լուսեր մեռած էր, Գերմա-

նիւյ մէջ հրդեհ ձգելէն ետքը. Հենրիկոս Բ. արքայն մեռած էր, Անգղիան վշտացնելէն եւ ապականելէն ետեւ. Կալվին մեռած էր, Գաղղիան վրդովելէն ետքը, Իսալիայէն եւ Սպանիայէն զատ, որոնք քանի մը տարի դեռ խաղաղութիւնը պիտի վայելէին, ամէն ազգերն այեկոծեալ նաւու մը կը նմանին. հերձուածոց եւ հերետիկոսութեանց հովերն աշխարհքիս վրայ կը վշեն, ոպասելով որ ամբարշտութեան եւ անտարբերութեան քամիները յաջորդեն անոնց. քրիստոնէի անունն ա՛ն ու դողի մէջ է: Մայրեր չեն կրնար համբուրել, զգուել իրենց որդիքն առանց մտածելու այն զարհուրելի վտանգներն՝ որ օր մը իրենց հաւատքն եւ խիղճը խախտելու պիտի ճգնին. ուստի ժամանակն եկած՝ հասած է. աստուածային մխիթարական նշան մը հաշկաւոր է այն մայրերը զօրացնելու համար. ահաւասիկ ուրեմն ասոր համար սրբուհի Մոնիգա կամաց կամաց իւր մթութենէն դուրս կելլայ, եւ պայծառագոյն լոյս մը կըսկսի սփռել այն փոթորկաց մէջ, անուշաղէմ ծիրանի գօսւոյ մը պէս :

(Շարայարեկի)



ՊԱՏԿԵՐ տասն եւ հինգ օրը մի անգամ կը հրատարակուի:

Բաժանորդագրութեան տարեկան գինն է
Կ. Պօլսոյ համար 40 դահեկան:
Գաւառաց եւ օտար երկիրներու համար
քղբատարի ծախքն ի միասին հաշուելով 50 « «

Խրաքանչիւր թիւ 2 դահեկան

ՊԱՏԿԵՐԻ խմբագրատունն է ի Բերա, Եեշիլ փողոց
Թիւ 1, ուր պետք է դիմել բաժանորդագրութեան եւ բերքին
վերաբերեալ այլ ամենայն խնդրոց համար:

RÉDACTION DU BADGUERE

Constantinople, Péra, rue YÉCHIL N ° 1

معارف نظارت جلیله سنک رخصتیه طبع اولمشدر